



Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 10

Հունվար 2011

Պետական գնումներ

Որոշնք են պետական
գնումների ընթացակարգերը, և
ե՞րբ կարող են դրանք
կիրառվել :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Մրցակցային ընթացակարգերի հիմնական տեսակները
- Ե՞րբ են կիրառվում հիմնական մրցակցային ընթացակարգերը:
- Առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ՝
Վերապահումներ

Պետական գնումներում հիմնական կանխավարկածն այն է, որ առանձնահատուկ տեսակի և նշանակության պայմանագրերը պետք է կնքվեն կիրառելով մրցակցային ընթացակարգը, որը հրապարակային է, արդար և թափանցիկ՝ ապահովելով հնարավորությունների և վերաբերմունքի հավասարություն մասկանիցների համար: Կան միայն սահմանափակ դեպքեր, երբ գնման գործընթացը կազմակերպվում է ոչ մրցակցային ընթացակարգով :

Հրահանգում նախատեսված՝ գնումների հիմնական մրցակցային ընթացակարգերն են բաց ընթացակարգը, սահմանափակ ընթացակարգը, մրցակցային երկխոսության ընթացակարգը և հայտարարությունը նախապես հրապարակելով բանակացային ընթացակարգը:

Բաց ընթացակարգը և սահմանափակ ընթացակարգը նախընտրելի ընթացակարգերն են, և դրանք կարող են օգտագործվել առանց որևէ պայմանի բավարարման: Մրցակցային երկխոսության ընթացակարգը և հայտարարությունը նախապես հրախարակելով բանակացային ընթացակարգը կարող են կիրառվել, թե առկա են դրանց կիրառման համար սահմանված պայմանները: Հրահանգով սահմանված են նաև հատուկ ընթացակարգեր, որոնք կարող են օգտագործվել բնակարանաշինության սուբսիդավորված ծրագրերի, հանրային աշխատանքների կոնցեսիաների և նախագծման ընթացակարգերի դեպքում՝ աշխատանքների կատարման պայմանագրերի կնքման համար:

Հրահանգում սահմանված են գործընթացներ, որոնց պետք է հետևի պետական պատվիրատուն, երբ օգտագործում է այս մրցակցային ընթացակարգերից յուրաքանչյուրը: Հրահանգում սահմանված մանրամասների մակարդակը տարբեր է յուրաքանչյուր ընթացակարգին համար::

Հրահանգը նաև ներառում է գնումների գործիքներ ընդգրկող դրույթներ, որոնք պետական պատվիրատուն կարող է ընտրել օգտագործել մրցակցային ընթացակարգերի հետ մեկտեղ, եթե դա թույլատրվում է: Դրանք են շրջանակային համաձայնագրերը, էլեկտրոնային աճուրդները և գնումների դինամիկ համակարգերը:

Եթե պետական պատվիրատուն ցանկանում է պայմանագիր կնքել ոչ մրցակցային ընթացակարգով, կիրառելով այսպես կոչված «առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակացային ընթացակարգը», ապա այդ ընթացակարգը կարող է կիրառվել, եթե առկա են Հրահանգում սահմանված հատուկ պայմանները: Արդարադատության Եվրոպական դատարանը (ԱԵԴ) հաստատել է, որ ոչ մրցակցային ընթացակարգը պետք է կիրառվի միայն բացառիկ դեպքերում :

Որոշնք են պետական պատվիրատուների համար հասանելի մրցակցային ընթացակարգերի հիմնական տեսակները:

Կան չորս հիմնական մրցակցային ընթացակարգեր.

Բաց ընթացակարգ: Բաց ընթացակարգը միափուլ գործընթաց է: Պետական պատվիրատուն հրապարակում է հայտարարություն և այնուհետև տրամադրում է ընթացակարգի ամբողջական փաստաթղթերը, ներառյալ՝ հրավերը և պայմանագիրը բոլոր այն մասնակիցներին, որոնք դիմել են մասնակցելու համար: Մասնակիցները հրավերով սահմանված կարգով ներկայացնում են հայտեր: Պետական պատվիրատուն կարող է ստանալ մեծ թվով հայտեր: Պետական պատվիրատուն չի կարող տեղեկանալ ներկայացվելիք հայտերի թվաքանակի մասին: Պետական պատվիրատուի կողմից հաշվի են առնվում այն հայտերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին: Հայտերը գնահատելիս հիմք է ընդունվում ամենացածր գինը կամ գնից բացի հաշվի են առնվում նաև ոչ գնային այլ չափորոշիչներ: Մասնակիցների հետ բանակցություններ չեն թույլատրվում, սակայն պետական պատվիրատուները կարող են մասնակիցներին տրամադրել պարզաբանումներ հրավերի վերաբերյալ:


Սահմանափակ ընթացակարգ: Սահմանափակ ընթացակարգը երկփուլ գործընթաց է: Պետական պատվիրատուն հրապարակում է հայտարարություն որի հիման վրա մասնակիցները ներկայացնում են մասնակցության դիմումներ և նախաորակավորման համար տեղեկություններ՝ որոնք օգտագործվում են պետական պատվիրատուի կողմից՝ որոշելու, թե արդյոք մասնակիցները կարողունակ են պայմանագիրը կատարելու համար, և ընտրում նախաորակավորման մասնակիցներին: Պետական պատվիրատուին թույլատրվում է սահմանափակել կարճ ցուցակում ընդգրկվող նախաորակավորված մասնակիցների թիվը, ինչը ն ծանակում է, որ ոչ բոլոր մասնակիցներն են ստանում գնման հետագա գործընթացին մասնակցելու իրավունք: Պետական պատվիրատուն հրավեր է տրամադրում այն մասնակիցներին, որոնց ընդգրկվել են կարճ ցուցակում: Սա նշանակում է, որ ի տարբերություն բաց ընթացակարգի՝ սահմանափակ ընթացակարգը թույլատրում է պետական պատվիրատուին սահմանափակել մասնակիցների թվաքանակը: Հայտերը գնահատելիս հիմք է ընդունվում ամենացածր գինը կամ գնից բացի հաշվի են առնվում նաև ոչ գնային այլ չափորոշիչներ: Բանակցություններ չեն թույլատրվում, սակայն պետական պատվիրատուները կարող են մասնակիցներին տրամադրել պարզաբանումներ հրավերի վերաբերյալ:

Մրցակցային երկխոսության ընթացակարգ: Մրցակցային երկխոսության ընթացակարգը երկփուլ գործընթաց է: Պետական պատվիրատուն հրապարակում է հայտարարություն որի հիման վրա մասնակիցները ներկայացնում են մասնակցության դիմումներ և նախաորակավորման համար տեղեկություններ՝ որոնք օգտագործվում են պետական պատվիրատուի կողմից՝ որոշելու, թե արդյոք մասնակիցները կարողունակ են պայմանագիրը կատարելու համար, և ընտրում նախաորակավորման մասնակիցներին: Պետական պատվիրատուին թույլատրվում է սահմանափակել կարճ ցուցակում ընդգրկվող նախաորակավորված մասնակիցների թիվը, ինչը նշանակում է, որ ոչ բոլոր մասնակիցներն են ստանում

գնման հետագա գործընթացին մասնակցելու իրավունք: Պետական պատվիրատուն հրավեր է տրամադրում այն մասնակիցներին, որոնց ընդգրկվել են կարճ ցուցակում և այդ մասնակիցների հետ սկսում է մրցակցային երկխոսություն: Մրցակցային երկխոսության ընթացքում գնման առարկայի բոլոր մանրամասները կարող են քննարկվել մասնակիցների հետ: Երբ պե տակ ան պատվիրատուն հավաստիանում է, որ ստացված առաջարկները համապատասխանում են իր պահանջներին, ապա մրցակցային երկխոսության փուլը համարվում է փակված և սկսվում է գ ն ա յ ի ն առ ա ջ ար կ ն եր ի ն եր կ ա յ ա գ մ ան փ ու լ ը: Այս փուլու, հայտերը գնահատելիս գնից բացի հաշվի են առնվում նաև ոչ գնային այլ չափորոշիչներ:

Հայտարարությունը նախապես հրապարակելով բանակցային ընթացակարգ:
Հ ա յ տ ա ր ա ր ո յ յ ու ն ը ն ա խ ա պ է ս հ ր ա պ ա ր ա կ ե լ ո Վ բ անակցային ընթացակարգը երկփուլ գործընթաց է: Պետական պատվիրատուն հրապարակում է հայտարարություն որի հիման վրա մասնակիցները ներկայացնում են մասնակցության դիմումներ և նախաորակավորման համար տեղեկություններ՝ որոնք օգտագործվում են պետական պատվիրատուի կողմից՝ որոշելու, թե արդյոք մասնակիցները կարողունակ են պայմանագիրը կատարելու համար, և ընտրում նախաորակավորմած մասնակիցներին: Պետական պատվիրատուին թույլատրվում է սահմանափակել կարճ ցուցակում ընդգրկվող նախաորակավորված մասնակիցների թիվը, ինչը ն ծանակում է, որ ոչ բոլոր մասնակիցներն են ստանում գնման հետագա գործընթացին մասնակցելու իրավունք: Պետական պատվիրատուն հրավեր է տրամադրում այն մասնակիցներին, որոնց ընդգրկվել են կարճ ցուցակում: Պետական պատվիրատուն հրավեր է տրամադրում այն մասնակիցներին, որոնց ընդգրկվել են կարճ ցուցակում և հայտերը ստանալուց հետո մասնակիցների հետ սկսում է բանակցությունները՝ ներկայացված հայտերի վերաբերյալ: Հայտերը գնահատվում են հիմք ընդունվում ամենացածր գինը կամ գնից բացի հաշվի են առնվում նաև ոչ գնային այլ չափորոշիչներ:

Բաց ընթացակարգ Սահմանափակ Մրցակցային երկ- բանակցային
 Ընթացակարգ խտության ընթա- ընթացակարգ`



Այլ հատուկ ընթացակարգեր: Կան այլ մրցակցային ընթացակարգեր ևս, որոնք կարող են կիրառվել: Բոլոր այս ընթացակարգերը պահանջում են, որպեսզի հայտարարությունը՝ մինչև ընթացակարգը սկսելը հրապարակվի Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկագրում:

Բնակարանաշինության ծրագրերի պայմանագրերի կնքման ընթացակարգ. Սա մրցակցային ընթացակարգ է, որը կարող է կիրառվել միայն բնակարանաշինության ծրագրերի գնման հետ կապված հատուկ պայմանագրերի կնքման ժամանակ: Այս պարագայում պետական պատվիրատուն ի տարբերությունը ստանդարտ գնման ընթացակարգի, մասնակիցների ընտրության հարցում ունի ավելի շատ ճկունություն:

- **Աշխատանքների կոնցեսիայի ընթացակարգ.** Սա մրցակցային ընթացակարգ է, որը կարող է օգտագործվել միայն աշխատանքների կոնցեսիաների պայմանագրերի կնքման ժամանակ և նախատեսում է ավելի ճկուն մրցակցային ընթացակարգ՝ աշխատանքների կոնցեսիոնների ընտրության համար: Այս ընթացակարգն ունի մանրամասն հատուկ պահանջներ, որոնք վերաբերում են ենթակապալառուների ընտրությանը:
- **Նախագծման մրցույթների ընթացակարգ.** Սա մրցույթային ընթացակարգ է, որը ներառում է մրցույթային հանձնաժողովի առկայություն՝ ներկայացված նախագծերը գնահատելու համար: Ընթացակարգի հետևանքը կարող է լինել նախագծման պայմանագրի կնքումը, մրցանակները կամ երկուսը միասին էլ: Չկան մանրամասն պահանջներ, որոնք վերաբերում են ընթացակարգի փուլերի քանակին, ժամկետներին կամ գործընթացին: Սահմանված են մրցույթի հանձնաժողովի գործունեության կարգը: Այս ընթացակարգը կարող է կիրառվել միայն հանրային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նախագծերի մշակման ժամանակ, որոնք հիմնականում օգտագործվում են գյուղական և քաղաքային բնակավայրերի պլանավորման և նախագծման ժամանակ::

Ե՞րբ են կիրառվում հիմնական մրցակցային ընթացակարգերի:

Բաց և սահմանափակ ընթացակարգեր: Պետական պատվիրատուն ազատ է ընտրություն կատարելու բաց և սահմանափակ ընթացակարգերի կիրառման միջև: Չկան պարտադիր նորմեր, որոնք պետական պատվիրատուին պարտադրում են նախապատվություն տալու այս ընթացակարգերից որևէ մեկին կիրառմանը, հետևաբան վերջինս ունի բացարձակ ազատություն:

Բա՞ց, թե՞ սահմանափակ ընթացակարգ: Ինչպես ընտրել ընթացակարգը:

Որպես գնումների պլանավորման մաս՝ պետական պատվիրատուն պետք է քննարկի, թե ընթացակարգերից որն է ամենահարմարը գնման տվյալ գործընթացը կազմակերպելու համար:

Ոչ ստանդարտ բնութագրեր ունեցող գնումների կատարման դեպքում

պետական պատվիրատուն կարող է կիրառել մրցակցային երկխոսության կամ հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգը: Որոշակի գնումների կատարման ժամանակ կարող են կիրառվել այս բաժնում նկարագրված այլ ընթացակարգերը ևս:

Բաց ընթացակարգի առավելությունները. Բաց ընթացակարգի կիրառումը հնարավորինս ապահովում է մրցակցության բարձր աստիճան և համարվում է ամենաթափանցիկ ընթացակարգը, քանի որ մասնակիցների ընտրությունը չի կատարվում նպատակահարմարության հիման վրա, ինչը նվազեցնում է նաև հնարավոր կոռուպցիայի ռիսկը: Այս ընթացակարգի կիրառման ժամանակ քիչ հավանական է նաև մասնակիցների հակամրցակցային համաձայնությունները:

Բաց ընթացակարգի տևողությունը ավելի կարճ է, քան սահմանափակ ընթացակարգինը::

Բաց ընթացակարգի թերությունները: Եթե պետական պատվիրատուն կկրառում է բաց ընթացակարգ, ապա այդ գործընթացի կազմակերպման շրջանակում վերջինիս կատարվելիք ծախսերը կարող են բարձր լինել, քանի որ պետական պատվիրատուն պետք է բոլոր մասնակիցներին տրամադրի ընթացակարգի առնչվող փաստաթղթերը (ծախսերը կարող են էականորեն կրճատվել, եթե փաստաթղթերը հասանելի են էլեկտրոնային եղանակով): Պետական պատվիրատուն կարող է պարտավորված լինել գնահատելու թվով շատ հայտեր, ինչը կարող է լինել ծախսատար և ժամանակատար: Ի լրումն, մասնակիցները կարող են պակաս հակված լինել մասնակցելու բաց ընթացակարգին, եթե կնքվելիք պայմանագրի կատարումը համեմատաբար բարդ է և որպես արդյունք՝ փաստաթղթերի պատրաստման համար պահանջում են մեծ ծավալի ներդրումներ: Հայտի ամբողջական պատրաստումը կարող է խոչընդոտող պատճառ հանդիսանալ մասնակցության համար, եթե մրցակցության բարձր աստիճանով պայմանավորված ցածր է հաղթող ճանաչվելու հավանականությունը:

Մահմանափակ ընթացակարգի առավելությունները: Ի տարբերություն բաց ընթացակարգի, նախաորակավորման արդյունքում սահմանափակելով մասնակիցների թվաքանակը, պետական պատվիրատուի կողմից կատարվելիք ծախսերը, ինչես նաև հայտերի գնահատման համար ծախսվող ժամանակը կարող է ավելի քիչ լինել: Մասնակիցների քանակի սահմանափակումը կարող է օժանդակել ոչ անհրաժեշտ ծախսերից խուսափելուն, կապված այն մասնակիցների հետ, որոնք չեն բավարարում ընթացակարգի պահանջներին: Մա կարող է հանգեցնել նաև արդյունավետ մրցակցության, պայմանավորված համեմատաբար լավ առաջարկներ ներկայացնելու հանգամանքով:

Մահմանափակ ընթացակարգի թերությունները: Այս ընթացակարգի կիրառման ժամանակ, նպատակահարմարությամբ պայմանավորված, բարձր է հնարավոր կոռուպցիոն ռիսկերը և հակամրցակցային համաձայնությունների հավանականության աստիճանը: Ներքո կոռուպցիայի հավանականությունն ավելի բարձր է՝ հայեցողության ավելի շատ իրականացման պատճառով և գաղտնի համագործակցությունն կարող է ավելի հավանական լինել: Մահմանափակ ընթացակարգի տևողությունը ավելի երկար է, քան բաց ընթացակարգինը:

Ընդունելի նորմեր

Բաց ընթացակարգի կիրառումը հիմնականում հարմար է սովորական, պարզ և հաճախակի հանդիպող գնումների կատարման ժամանակ:

Սահմանափակ ընթացակարգը ևս կարող է օգտագործվել սովորական, պարզ և հաճախակի հանդիպող գնումների կատարման ժամանակ, եթե պետական պատվիրատուն այն կարծիքին է, որ նախատրակավորման արդյունքում մասնակիցների քանակը սահմանափակումը արդյունավետ է: Սահմանափակ ընթացակարգը առավել նպատակահարմար է կիրառել ոչ ստանդարտ բնութագրեր ունեցող գնումների կատարման ժամանակ:

Որոշելով, թե որ ընթացակարգը կիրառել, պետական պատվիրատուն պետք է հաշվի առնի օ մի շարք գործոններ, ներառյալ՝ ընթացակարգի իրականացման ծախսերը, մրցակցության օգուտները, սահմանափակ մրցակցության առավելությունները և կոռուպցիայի և/կամ հակամրցակցային համաձայնությունների հնարավոր ռիսկը:

Մրցակցային երկխոսություն կամ հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ: Մրցակցային երկխոսության և հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգը կարող են կիրառվել, եթե դրանց կիրառման համար անհրաժեշտ պայմանները առկա են: Հրահանգում չկան նորմեր, որոնք պետական պատվիրատուից պահանջում են կիրառման նախապատվությունը տալ այս ընթացակարգերից մեկին:

Երբ կարող է կիրառվել մրցակցային ը ն թ ա գ ա կ ա ր գ ը : Մրցակցային երկխոսության ընթացակարգն կիրառման համար Հրահանգով նախատեսված են հետևյալ երկու պայմանները՝ (1) կնքվելիք պայմանագիրը պետք է համապատասխանի “հատկապես բարդ պայմանագրի” հասկացությանը և (2) պետական պատվիրատուն պետք է հիմնավորի, որ կամ բաց ընթացակարգի կամ սահմանափակ ընթացակարգի կիրառմամբ պայմանագրի կնքումը հնարավոր չէ:

Երբ կարող է կիրառվել հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգը: Հրահանգը սահմանում է այս ընթացակարգի կիրառման սահմանափակ դեպքեր և պայմաններ: Պայմանները բաժանվում են երկու խմբի՝ (1) մրցակցային ընթացակարգը հայտարարվել է չկայացած և (2) մրցակվային ընթացակարգ չի կազմակերպվել Նշված պայմանները կարող են մեկնաբանվել հետևյալ կերպ.

- **Մրցակցային ընթացակարգը հայտարարվել է չկայացած:** Սա կիրառվում է աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման նկատմամբ, եթե դրանց ձեռքբերման նպատակով կազմակերպված բաց, սահմանափակ կամ մրցակցային երկխոսության ընթացակարգը հայտարարվել է չկայացած և եթե հետագա ընթացակարգը էականորեն չի փոխում պայմանագրի սկզբնական պայմանները:

Օրինակ

Առողջապահության ոլորտում պետական պատվիրատուն սահմանափակ ընթացակարգի կիրառմամբ կազմակերպում է ռենտգեն սարքավորման ձեռքբերման գործընթաց: Գործընթացին մասնակցելու շրջանակում ներկայացվել են թվով չորս հայտեր, սակայն հայտերը գնահատվում են անբավարար:

Պետական պատվիրատուն, առանց փոփոխելու պայմանագրի սկզբանական պայմանները, որոշում է կազմակերպել բանակցային ընթացակարգ՝ սահմանափակ ընթացակարգի շրջանակում հայտեր ներկայացրած չորս մասնակիցներին հնարավորություն տալով ներկայացնել նոր հայտեր,:

- **Մրցակցային ընթացակարգ չի կիրառվել, պայմանով, որ նախապես հնարավոր չէ որոշել պայմանագրի կատարման համար պահանջվող գումարի չափը** Սա կիրառվում է աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի նկատմամբ, եթե նախապես անհնար է որոշել պայմանագրի կատարման համար պահանջվող գումարի չափը կապված աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման բնույթի ց կամ դրանց փոխկապակցված ռիսկերի պատճառով: Այս ընթացակարգը կարող է կիրառվել “բացառիկ դեպքերում”:

Օրինակ

Տեղական իշխանությունը ցանկանում է պայմանագիր կնքել քաղաքի կենտրոնում նոր գրասենյակային շենքի կառուցման համար, որի տարածքում վերջինս ենթադրում է, որկարող է լինեն հնագիտական մնացորդներ, և շինարարության ընթացքում անհնրաժեշտություն կառաջանա պահպանել դրանք: Տեղական իշխանությունը չգիտի, թե մասնակիցներին ինչ աստիճանի ռիսկ են պատրաստ վերցնել՝ կապված հնագիտական մնացորդների պաշտպանության նպատակով շինարարության արժեքի և ժամկետների վրա ունեցած ազդեցության հետ:

- **Ծառայությունների մատուցման տեխնիկական հատկանիշները չեն կարող պատրաստվել բավարար հստակությամբ:** Սա կիրառվում է ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման ժամանակ միայն այն դեպքում, եթե ծառայությունների մատուցման տեխնիկական հատկանիշները չեն կարող պատրաստվել բավարար հստակությամբ, որը հնարավորություն կտա

պայմանագիրը կնքել կիրառելով օգտագործելով բաց կամ սահմանափակ ընթացակարգը:

- **Պայմանագիրը կնքվում է ուսումնասիրության, փորձերի կամ զարգացման աշխատանքներ կատարելու նպատակով:** Սա կիրառվում է աշխատանքների կատարման պայմանագրերի կնքման ժամանակամիայն այն դեպքում, եթե պայմանագիրը կնքվում է այնպիսի աշխատանքների կատարման համար, որոնք իրականացվում են բացառապես ուսումնասիրության, փորձի կամ զարգացման նպատակներով և չեն ենթադրում շահութաբերություն

• :

Մրցակցային ընթացակարգերի կիրառման պայմաններ: Հրահանգը պարունակում է մանրամասն պայմաններ՝ մրցակցային ընթացակարգերի կիրառման վերաբերյալ, ընդգրկելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են հայտարարության հրապարակումը, մասնակցի ընտրության գործընթացը և կիրառվելիք չափորոշիչները, ընթացակարգում օգտագործվելիք փաստաթղթերի բովանդակությունը, ինչպես նաև օրենքով սահմանված ժամկետները, որնքպետք է կիրառվեն գործընթացներից յուրաքանչյուրի դեպքում:

Օրենքով նախատեսված ժամկետները: Օրենքով նախատեսված հիմնական ժամկետները վերաբերում են թույլատրված ժամկետներին, որոնք նախատեսված են Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում հայտարարության հրապարակման և հայտերի ներկայացման վերջնաժամկետի միջև, հրավերի տեղադրման և հայտերի գնահատման ժամկետները, մորտատորիումի գործողության ժամկետը: Կան նաև օրենքով սահմանված ժամկետներ, որոնք կիրառվում են հատուկ նշված դեպքերում մասնակիցներին տեղեկատվության տրամադրման ժամանակ: Օրենքով սահմանված ժամկետների ազդեցության օրինակը գնումների գործընթացների վրա կարող էք տեսնել հետևյալ սխեմայից՝ հիմնված սահմանափակ ընթացակարգով գնման գործընթացի կազմակերպման վրա:


Որոշակի դեպքերում, հնարավոր է նվազեցնել օրենքով սահմանված ժամկետները՝ պայմանով, որ դրանք պետք է համապատասխանեն Հրահանգով սահմանված մի շարք պայմանների:

Կոմունալ ծառայությունների կազմակերպություններ

Հայտարարության ընտրությունը: Կոմունալ ծառայությունների կազմակերպություններն ունեն ազատ ընտրության հնարավորություն մրցակցային ընթացակարգի երեք հիմնական ձևերի ընտրության միջև. բաց ընթացակարգ, սահմանափակ ընթացակարգ և հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ: Կոմունալ ծառայությունների կազմակերպությունները հիմնականում ավելի շատ ձկունություն ունեն այն առումով, թե ինչ են հայտարարում, որը նշված է Կոմունալ ծառայությունների Հրահանգում որպես “մրցակցության կանչ”:

Գնումների գործընթացի իրականացումը. Կոմունալ ծառայությունների Հրահանգը, որն ընդգրկում է գնումների գործընթացների իրականացումը համեմատաբար քիչ է մանրամասնեցված և նախատեսում է ավելի քիչ սահմանափակումներ, է, քան հանրային ոլորտի նկատմամբ կիրառվող կանոնները: Օրինակ, չկա ընտրական փուլի չափորոշիչների վերջնական պայմաններ: Կան դրույթներ, որոնք թույլատրում են հայտերի ստացման ժամկետները սահմանվեն փոխադարձ համաձայնությամբ:

Սահմանափակ ընթացակարգ. օրենքով սահմանված ժամկետներ. Ամփոփում



Առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ

Պետական պատվիրատուն պետք է ելնի այն կանխավարկածից, որ պահանջվում է կիրառել մրցակցային գործընթաց՝ ԵՄՊՏ-ում հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ: Նախատեսված են միայն շատ սահմանափակ դեպքեր, երբ պայմանագիրը, որը հատուկ տիպ և արժեք ունի, ինչը նշանակում է, որ այն բավարարում է Հրահանգի բոլոր պայմաններին, կարող է կնքվել առանց հայտարարությունը նախապես հրապարակելու՝ բանակցային ընթացակարգով՝ առանց մրցակցային ընթացակարգի կիրառման:

Զգուշացում. Արդարադատության Եվրոպական դատարանի (ԱԵԴ) նախադեպային իրավունքից պարզ է դառնում, որ հնարավորությունը վերապահումներ անել ԵՄՊՏ-ում առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի կիրառման պայմանները շատ սահմանափակ են: Պետական պատվիրատուի վրա դրված է պատասխանատվություն՝ ապացուցելու համապատասխանությունը այս մոտեցումը արդարացնող պայմանների հետ:

Որո՞նք են վերապահումները պայմանագրի ծանուցման հրապարակման և մրցակցային գործընթացի օգտագործման պարտականությունից:

Վերապահումները տարբերվում են՝ համաձայն պայմանագրի տեսակի և հանգամանքների:

Ամփոփ.

Վերապահումներ հանրային աշխատանքների կատարման, հանրային մատակարարման և հանրային ծառայությունների մատուցման պայմանագրերի համար.

- **Ներկայացվել են սահմանված պահանջներին չհամապատասխանող հայտեր.** Երբն բաց կամ սահմանափակ ընթացակարգերի կիրառման արդյունքում ստացվել են սահմանված պահանջներին չհամապատասխանող հայտեր և էականորեն չեն փոխվում պայմանագրի պայմանները:
- **Տեխնիկական կամ գեղարվեստական արդյունքների կամ բացառիկ իրավունքների պաշտպանություն.** Երբ տեխնիկական կամ գեղարվեստական արդյունքների կամ բացառիկ իրավունքների պաշտպանության հանգամանքով պայմանավորված պայմանագիրը կարող է կնքվել միայն որոշակի մասնակցի հետ:
- **Ծայրահեղ անհրաժեշտություն.** Իրադարձությունների պատճառով, որոնք պետական պատվիրատուն չէր կարող կանխատեսել, երբ բաց կամ

սահմանափակ ընթացակարգերի կիրառումը ժամկետի առումով անհնար է և և եթե դա համարվել է խիստ անհրաժեշտ:

Վերապահումներ հանրային մատակարարման պայմանագրերի համար.

- **Արտադրանք, որն արտադրված է միայն ուսումնասիրության և զարգացման նպատակներով.** Եթե ներգրավված արտադրանքը արտադրված է բացառապես ուսումնասիրության, փորձառնությունների, կրթության կամ զարգացման նպատակներով և ոչ թե այն դեպքում,, եթե կա քանակական արտադրություն, հաստատելու շահութաբերությունը կամ հատուցելու ուսումնասիրության և զարգացման ծախսերը:
- **Լրացուցիչ ապրանքների ձեռքբերում սկզբնական մատակարարից.** ձեռք են բերվում ապրանքների լրացուցիչ քանակություններ, որոնք նախատեսված են մատակարարի կողմից նախապես մատակարարված սարքավորումները (կառուցվածքները) փոխարինելու կամ լրացնելու համար, և սկզբնական մատակարարի փոփոխությունը կպարտադրի պատվիրատուին ձեռք բերել այլ հատկանիշներ ունեցող ապրանքներ, ինչը շահագործման ու պահպանման առումով կառաջացնի անհամատեղելիություն կամ անհամաչափ տեխնիկական բարդություններ: Այս պայմանը կարող է կիրառվել միայն սկզբնական պայմանագրի կնքմանը հաջորդող երեք տարվա ընթացքում.
- **Ապրանքային շուկայում առաջարկվող և գնվող մատակարարում**
- **Բացառապես շահավետ պայմաններով ապրանքների գնում** ապրանքները ձեռք են բերվում իր ձեռնարկատիրական գործունեությունը վերջնականորեն դադարեցնող կազմակերպությունից կամ անվճարունակության գործով լուծարողներից կամ կառավարիչներից, վարկատուների հետ պայմանավորվածության հիման վրա կամ նմանօրինակ ընթացակարգի միջոցով՝ պատվիրատուի համար առանձնակի նպաստավոր պայմաններով.

Վերապահումներ հանրային ծառայությունների մատուցման պայմանագրերի համար.

- **Նախագծման մրցույթին հետևելը.** Երբ պետք է պայմանագիրը շնորհվի հաղթող ճանաչված մասնակցին (ներին) պայմանով, որ կան մեկից ավելի հաղթող թեկնածուներ, բանակցություններ են տարվում բոլոր հաղթող թեկնածուների հետ:

Վերապահումներ հանրային աշխատանքների կատարման և հանրային ծառայությունների մատուցման պայմանագրերից.

- **Լրացուցիչ պահանջների.** Սկզբնապես քննարկվող ծրագրում լրացուցիչ աշխատանքների կամ ծառայությունների կամ սկզբնական պայմանագրի համար, եթե մի շարք խիստ սահմանված պայմաններ բավարարված են:
- **Աշխատանքների կամ Ծառայությունների կրկնություն:** Նոր աշխատանքների կամ ծառայությունների համար, որոնք կազմում են նմանատիպ աշխատանքների կամ ծառայությունների կրկնություն, որոնք վստահված են նույն տնտեսվարող սուբյեկտներին՝ սկզբնական պայմանագրի համաձայն, երբ մի շարք խիստ պայմաններ բոլորն էլ բավարարված:

Հետագա ընթերցանություն:

[SIGMA Public Procurement Training Manual](#)